


8646

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՎՐ. ԿՈՍԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏԱՍԲԱԺԻՆ

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ



ԿՈՒՍՇՐԱՏ

1933

ԹԻՖԼԻՍ

Իմպերիալիզմը փտող և մեռնող կապիտալիզմն է, նրա վերջին ետապը: Կապիտալիզմի բոլոր հակասութիւններն սրումը: Ճգնաժամների քայքայիչ ներգործութեան աճումն իմպերիալիզմի դարաշրջանում: Իմպերիալիզմը՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան նախորդական է: Հոկտեմբերյան հեղափոխութեանը վերապես համաշխարհային սոցիալիստական հեղափոխութեան սկիզբը և նախադրյալ:

Համկոմկուսի և Կոմինտերնի ծրագիրը խորհրդային սիստեմի՝ պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի հիմնական գծերի մասին: Կապիտալիստների դասակարգի իշխանութիւնը տապալված է: Իշխանութիւնը բանվոր դասակարգի ձեռքումն է: Արտադրութեան գործիքներն ու միջոցները կապիտալիստներէջ խլված են և դարձված պրոլետարական պետութեան սեփականութիւն: Հանրային սեփականութիւնը (պետական, կոոպերատիվ, կոլխոզային) սրբազան է և անձեռնմխելի: Հանրային (սոցիալիստական) սեփականութիւնը մեր կարգերի հիմքն է: Մրցակցութեան, անարխիայի և ճգնաժամների բացակայութիւնը: Արտադրութեան պլանայնութիւնը: Ժողովրդական յեկամուտի բաշխումը կատարվում է վոչ թե յեկնելով շահագործող դասակարգերի և նրանց բազմամարդ մակարդեժ ծառաների հարստացման շահերից, այլ բանվորների ու գյուղացիների նյութական դրութիւնը սիստեմատիկ կերպով բարձրացնելու և քաղաքում ու գյուղում սոցիալիստական արտադրութիւնն ընդարձակելու շահերից: Կուսակցութիւնը բանվոր դասակարգի կազմակերպիչն ու ղեկավարն է սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում: Գյուղացիութեան հիմնական մասսաների ղեկավարութիւնը պրոլետարիատի կողմից և նրա սոցիալիստական վերակառուցումը: Շահագործման բացակայութիւնը, աշխատանքի սոցիալիստական ձևերը ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական հատվածում: Գործաբանները և սովխոզները պետական ձեռնարկութիւններ են, հետևողական սոցիալիստական տիպի ձեռնարկութիւններ, կոլխոզները՝ տնտեսութեան սոցիալիստական տիպ:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիման վրա աճած համաշխարհային ճնշանակամ նգնաժամը կապիտալիզմի յերկրներում, արտադրութեան աննախընթաց կրճատումը, գործադրկութեան վիթխարի աճումը, բանվորների աղքատացումը և գյուղացիութեան քայքայումը: Կապիտալիստական յերկրների և գաղութների

ների աշխատավորական մասսաների ու բանվոր դասակարգի քաղաքական ճնշման և շահագործման ուժեղացումը:

Տիրող դասակարգերի քաղաքական ռեակցիայի խիստ ուժեղացումը, ֆաշիզմի և պետական իշխանութեան ֆաշիստական աճումը: Ֆաշիզմը և սոցիալ-ֆաշիզմը վորպես միասնական բուրժուական ֆրոնտի յերկու թևեր: Կապիտալիստական յերկրների պրոլետարիատի և գաղութների աշխատավորութեան հեղափոխական շարժման աճումը: Կոմինտերնը համաշխարհային հեղափոխական շարժման կազմակերպիչն է ու ղեկավարը:

ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՆՔԱԿԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ում

Խորհրդային Միութեան մեջ արդյունաբերութեան վիթխարի աճում և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը ԽՍՀՄ ինդուստրիալ պատվանդանի աճման հիման վրա: Գործադրկութեան վերացումը, պրոլետարիատի վիթխարի թվական, աճումը, աշխատավորութեան նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացումը, 7-ժամյա բանվորական օրը: Աշխատանքի սոցիալիստական ձևերի և մեթոդների (սոցմրցում և հարվածայնութիւն) աճումը: ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդների դաշինքի ամրացումը: Սոցիալիզմի շրջանը թեկուսելը: Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը: «Ուլ-ում» հարցի անվերադարձ լուծումը սոցիալիզմի ոգտին քաղաքում և գյուղում:

ԽՍՀՄ-ը վերջնականապես հաստատվեց նոր, սոցիալիստական ճանապարհի վրա: Սոցիալիզմի վճռական հաղթանակը ԽՍՀՄ-ում կարելի չէ արդեն ավարտված համարել:

Կուսակցութիւնը վորպես սոցիալիստական շինարարութեան հաղթանակների ղեկավար և կազմակերպիչ: Պայքարը յերկու ֆրոնտի վրա կուսակցութեան գլխավոր գծի համար, ընդդէմ աշխարհաբոլորի իբրև տվյալ ետապի գլխավոր վտանգի, ընդդէմ «ձախ» ոպորտունիզմի, ընդդէմ նրանց նկատմամբ հաշտվողականութեան, ահա սոցիալիստական շինարարութեան աշողութիւնների հիմնական պայմանը:

ՅԵՐԿՈՒ ՍԿԶՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԴԻՐ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

ԽՍՀՄ-ի դեմ ուղղած ինտերվենցիայի հաշվին ճգնաժամեց դուրս գալու փորձերը կապիտալիստների կողմից: Իմպերիալիստական նոր պատերազմների նախապատրաստութիւնը: Չինական

զինվորական ուժերի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա 1929 թվին՝ 1931—32 թ. չին-յապոնական պատերազմը իբրև փորձ կապիտալիստների կողմից պատերազմի և հակախորհրդային ինտերվենցիայի միջոցով ճգնաժամից դուրս գալու ուղղութիւնը: Խորհրդային Միութեան խաղաղասիրական քաղաքականութիւնը:

Սոցիալ-ֆաշիզմի և տրոցկիզմի վորպես համաշխարհային հակահեղափոխական բուրժուազիայի ավանգարդի՝ դերը ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու գործում: ԽՍՀՄ աշխատավորութեան և համաշխարհային պրոլետարիատի խնդիրները կառուցված սոցիալիզմի յերկրի պաշտպանութեան գործում:

Ք Ե Մ Ա II

ԴԵՊԻ ԿՈՍՄՈՆԻԶՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Համկոմկուսի և Կոմինտերնի ծրագիրը պրոլետարիատի պայքարի վերջնական նպատակի՝ կոմունիզմի մասին: Կոմունիստական կարգերի հիմնական գծերը—արտադրութեան գործիքների և միջոցների հանրային սեփականութիւն, հասարակութեան դասակարգային բաժանման բացակայութիւն, հանրային արտադրութեան գիտակից և պլանաչափ կազմակերպում արագ աճող հասարակական ուժերի հսկայական աճում բարձր տեխնիկայի պատվանդանի վրա. քաղաքի և գյուղի հակադրման բացակայութիւն, բաշխում «յուրաքանչյուրն ըստ իր ընդունակութիւնների, յուրաքանչյուրին ըստ կարիքների» սկզբունքով. «աշխատանքը կը դադարի լոկ ապրուստի միջոց լինելուց, այլ կդառնա կյանքի ամենաառաջին պահանջը»: Կանոնադրաբար մտավոր և ֆիզիկական աշխատանքի տարբերութիւնը. պայմաններ կստեղծվեն կուլտուրայի չտեսնված վերելքի և մարդկանց համակողմանի զարգացման համար. կոմունիզմի բարձրագույն ստադիայում կմահանա պետութիւնը:

Համկոմկուսի և Կոմինտերնի ծրագիրը կոմունիզմի առաջին փուլի՝ սոցիալիզմի հիմնական գծերի մասին: Սոցիալիզմը կոմունիստական հասարակութիւնն է, վորը «դեռ նոր է դուրս գալիս կապիտալիստական հասարակութիւնից, դուրս է գալիս՝ ամեն տեսակետից—տնտեսական, բարոյական, մտավոր տեսակետից—պատված հին հասարակութեան—վորի ծոցից նա դուրս է գալիս —խալերով» (Կոմինտերնի ծրագրից): Արտադրութեան միջոցնե-

րի մասնավոր սեփականութեան վոչնչացումը. դասակարգերի և մարդու միջոցով մարդու շահագործման վոչնչացումը, մթերքների բաշխումն ըստ արտադրանքի՝ արտադրողական ուժերի դեռևս վոչ բավարար զարգացման հետևանքով: Հիմնական սոցիալիստական սկզբունքն է—«Աշխատանքի հավասար քանակութեան համար մթերքի հավասար քանակութիւն»:

Հանրային արտադրութեան և մթերքների բաշխման հաշվառման ու վերահսկողութեան անհրաժեշտութիւնը: Հանրային սեփականութեան ամենախիստ պաշտպանութիւնը: Պրոլետարիատի պետական իշխանութեան պահպանման և ամրացման անհրաժեշտութիւնը:

Լենինը կապիտալիզմից անմիջապես կոմունիզմին անցնելու անկարելիութեան մասին. «կապիտալիզմից մարդկութիւնը կարող է անմիջապես անցնել միայն սոցիալիզմին, այսինքն՝ արտադրութեան միջոցների ընդհանուր տիրապետմանը և մթերքներն ըստ յուրաքանչյուրի աշխատանքի բաշխելուն»:

Կապիտալիզմից խաղաղ ճանապարհով սոցիալիզմին անցնելու անկարելիութիւնը և անցման շրջանի անխուսափելիութիւնը—պրոլետարական դիկտատուրայի շրջանի՝ իբրև կապիտալիստական հասարակութիւնը հեղափոխական ճանապարհով կոմունիստական հասարակութեան փոխարկելու շրջանի:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան սկիզբն է ու նախադրյալը: Լենինը և Ստալինը ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու, սեփական ուժերով և միջազգային պրոլետարիատի աջակցութեամբ ներքին հակասութիւնները հաղթահարելու մասին: Կուսակցութեան պայքարը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար, ընդդեմ տրոցկիզմի, վորը դարձել է հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը, ժխտում է մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորութիւնը, ընդդեմ աջ ոպորտունիստների, վորոնք՝ գործնականում սահել են մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորութիւնը ժխտելու տեսակետի վրա:

Պրոլետարիատի դիկտատուրան կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ամենաանհրաժեշտ և վճռական նախադրյալն է: «Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային պայքարի վերջացումը չէ, այլ նրա շարունակումը նոր ձևերով: Պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար է, արյունահեղ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և

վարչական, ընդդեմ հին հասարակութեան ուժերի և տրադիցիաների»։ «Պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը պրոլետարիատի և գյուղացիութեան դաշինքի պահպանումն է, վարպետի պրոլետարիատը կարողանա պահել ղեկավար դերը և պետական իշխանութիւնը»։ «Պրոլետարիատի դիկտատուրայի որոշ հարկավոր և լինում վերադաստիարակել միլիոնավոր գյուղացիների և մանր տնտեսատերերի, հարյուր հազարավոր ծառայողների, չինովնիկների, բուրժուական ինտելիգենտների, նրանց բոլորին յենթակա դարձնել պրոլետարական պետութեան և պրոլետարական ղեկավարութեան, նրանց մեջ հաղթահարել բուրժուական սովորութիւններն ու տրադիցիաները», ինչպես և անհրաժեշտ կլինի «յերկարատե պայքարում պրոլետարիատի դիկտատուրայի հողի վրա վերադաստիարակել իրենց՝ պրոլետարներին, վորոնք իրենց սեփական մանր-բուրժուական նախապաշարումներն ազատազրկում են վոչ թե միանգամից, հրաշքով, աստվածամոր հրամանով, լողունդի, բանաձևի կամ դեկրետի հրամանով, այլ լոկ յերկարատե ու դժվարին մասսայական պայքար մղելով մասսայական մանր-բուրժուական ազդեցութիւններին դեմ» (Լենին)։ Պրոլետարիատը ներկայացնում է իրագործում է աշխատանքի հասարակական կազմակերպման շատ ավելի բարձր տիպ համեմատած կապիտալիզմի հետ։

Պրոլետարիատի դիկտատուրայի գլխավոր ելութիւնը կաշանում է աշխատավորութեան առաջավոր ջոկատի, նրա ավանգարդի, նրա միակ ղեկավարի՝ պրոլետարիատի կազմակերպվածութեան և կարգապահութեան մեջ։ Պրոլետարիատի խորհրդային պետութիւնը նրա դիկտատուրան է, նրա դասակարգային միիշխանութիւնը։ Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների հանրապետութիւնը վոչ միայն ավելի բարձր տիպի դեմոկրատական հաստատութիւններն է և հանդիսանում, այլև այն միակ ձևը, վորն ընդունակ է ապահովել ամենից ավելի անհիմնադրային անցումը դեպի սոցիալիզմ։

Մտալինը պրոլետարիատի դիկտատուրայի յերեք կողմերի մասին (շահագործողների ճնշումը, աշխատավորութեան ներգրավումը սոցիալիստական շինարարութեան գործում պրոլետարիատի ղեկավարութեամբ, անդասակարգ հասարակութեան կառուցումը)։

Կուսակցութիւնը և բանվոր դասակարգը պրոլետարիատի դիկտատուրայի սխառնում։ Պրոլետարիատի մասսայական կազմակերպութիւններն՝ պրոֆսիութիւններն, խորհուրդներն, կոոպերացիայի, կոմյերիտիւթեան դերը։

Կապիտալիստական ելեմենտների և առհասարակ դասակարգերի վերացման անկարելիութիւնն առանց անողորմ դասակարգային պայքարի։ Դասակարգային պայքարի սրման անխուսափելիութիւնը հետագայում ևս, առանձին մոմենտներում և հատկապես առանձին շրջաններում, սոցիալիստական շինարարութեան առանձին բնագավառներում։ XVII կուսկոնֆերենցիան կապիտալիստական ելեմենտներին և առհասարակ դասակարգերի վերջնական վերացման, դասակարգային տարբերութիւններ և շահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացման մասին, իբրև յերկրորդ հնգամյակում անդասակարգ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու արժանաւոր խնդրի։ Այլի բարոտունիստական տեսութիւնը անցման շրջանում դասակարգային պայքարի մարման, սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման մասին։ Ոպորտունիստական է այն պնդումը, թե յերկրորդ հնգամյակի շրջանը խաղաղ և «սահուն» զարգացման շրջան է։

Պրոլետարական պետութեան հետագա ամրացման անհրաժեշտութիւնը կապիտալիստական ելեմենտների և առհասարակ դասակարգերի վերացման, բուրժուազիայի ամեն տեսակ հակահեղափոխական յերկույթների ճնշման խնդիրները լուծելու, գյուղացիական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը ղեկավարելու, սոցիալիզմի վողջ շինարարութիւնը ղեկավարելու համար։

Թ Ե Մ Ա III

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԶՈԿԱՏՆ Ե

Բանվոր դասակարգը ժամանակակից հասարակութեան ամենաառաջավոր, հեղափոխական դասակարգն է։ Բանվոր դասակարգի պատմական դերը։ Կուսակցութեան նշանակութիւնն ու դերը բանվոր դասակարգի հեղափոխական պայքարում։ Մարտական, հեղափոխական, մարքս-լենինյան տեսութեամբ զինված կուսակցութեան գոյութիւնը վորպես հիմնական պայման բանվոր դասակարգի պատմական դերը կատարելու, այն է՝ բուրժուազիային

տապալելու, դիկտատուրա նվաճելու և սոցիալիստական հասարակութուն կառուցելու համար:

Համկոմկուսի Կոմիտեների ծրագրերը կուսակցութեան դերի մասին: Կուսակցութեանը վորպես բանվոր դասակարգի առաջավոր և կազմակերպված ջոկատ: Կուսակցութեանը վորպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպութեան բարձրագույն ձև: Կուսակցութեանը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի զենք: Կուսակցութեանը վորպես պրոլետարիատի մասսայական կազմակերպութեանների (պրոֆսիոնութեանների, խորհուրդների, կոոպերացիայի, կոմբերիտիութեան) ղեկավար: Կուսակցութեանը վորպես կամքի միասնութուն, վոր անհամատեղելի չէ ֆրակցիաների գոյութեան հետ: Կուսակցութեանն ամբանում է նրանով, վոր իրեն մաքրում է ոպորտունիստական ելեմենտներից: Յերկու ֆրոնտով պայքարն ընդդեմ ոպորտունիզմի և հաշտվողականութեան, վորպես կուսակցութեան զարգացման պայման և նրա հաղթանակների նախադրյալ պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում:

Բոլշևիկյան կուսակցութեանը նոր տիպի կուսակցութեան է, վորը խնդիր է դրել պայքարել պրոլետարական հեղափոխութեան համար, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակների և սոցիալիզմի կառուցման համար: Համկոմկուսի ծրագրերը պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման և սոցիալիստական հասարակութեան կառուցման ծրագիր է:

Կոմունիստի պարտականութեանն է՝ ակտիվ պայքարել կուսակցութեան միասնականութեանն ամրացնելու համար, ընդդեմ աջ ոպորտունիզմի՝ իբրև տվյալ ետապի զլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» ոպորտունիզմի, նրանց նկատմամբ հաշտվողականութեան:

«Կոմունիստ լինել նշանակում է դաստիարակութեան և կարգապահութեան որինակ տալ» (Լ.Ենիև): Կոմունիստ լինել, ասել է, «կարողանալ ակտիվ կերպով պայքարել կուսակցութեան գլխավոր գծի համար, հեղինակութեան վայելել մնացած բանվորական մասսայում, կարողանալ իր հետևից տանել մասսաներին պայքարելու ածուխի, մետաղի, հացի համար, հաղթահարելու դժվարութեանները, պայքարելու սոցիալիստական խնդիրների գործնական իրականացման համար: Առանց դրան սահմանագիծ չկա կուսակցութեան անդամի և բանվորական մնացած մասսայի միջև» (Պոսիսեվ): Կոմունիստի ակտիվ և առաջավոր մասնակցութեանը

սոցմրցմանն ու հարվածայնութեանը, ընկ. Ստալինի վեց պայմանները կատարմանը: Կուսակցութեան՝ իբրև միասնական համաշխարհային կոմունիստական կուսակցութեան՝ անդամի ինտերնացիոնալ պարտականութեանները՝ միջազգային պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի համար, կոմունիզմի համար մղվող պայքարում: Մարքս-լենինյան ուսուցման դերը կուսակցութեան անդամների և թեկնածուների բոլշևիկյան մարտունակութեան անդամների գործում: Գաղափարական-տեսական մակարդակի սխառնատիկ բարձրացումը կոմունիստի հիմնական պարտականութեաններից մեկն է:

Բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքը: Դեմոկրատական ցենտրալիզմը վորպես կուսակցութեան կառուցման կազմակերպչական սկզբունք: Կուսակցութեան բոլոր ղեկավար մարմինների ընտրականութեանը: Ստորին կազմակերպութեանների յենթաբաժնի վերագրա կազմակերպութեաններին: Կուսակցութեան՝ գաղափարական և կազմակերպչական միասնականութեանը նրա պայքարի աջողութեան գրավականն է:

Ամենախիստ յերկաթյա կարգապահութեանը բոլշևիզմի աջողութեանների հիմնական պայմաններից մեկն է. «Ով գեթ փոքրը չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցութեան յերկաթյա կարգապահութեանը (հատկապես նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային պրոլետատիատի դեմ դնալու» (Լ.Ենիև): Ներկուսակցական դեմոկրատիայի և ինքնաքննադատութեան նշանակութեանը կուսակցական մասսաների ակտիվութեանը, գիտակցականութեանը և բոլշևիկյան կայունութեանը բարձրացնելու գործում, ինքնաքննադատութեան ճանձման ամեն տեսակ փորձերի դեմ վճռաբար պայքարելու անհրաժեշտութեանը: Կուսակցութեան կանոնադրութեանը Բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքների կոնկրետ արտահայտութեանն է: Կուսակցութեան կանոնադրութեան հիմնական դրույթները: Կուսակցական կազմակերպութեանների կառուցվածքը: Բջիջը կուսակազմակերպութեան հիմունքն է: Կուսակցական ապարատի նշանակութեանը: Կուսակցական ապարատը կուսակցութեան զենքն է պրոլետարիատի դասակարգային պայքարի քաղաքական ու կազմակերպչական խնդիրների իրականացման գործում: Բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքների միջազգային նշանակութեանը: Համկոմկուսի կազմակերպչական փորձի օգտագործումը Կոմիտեների չինարարութեան մեջ:

Կուսակցական շինարարութեան և կուսամասայական աշխատանքի հերթական խնդիրները ձեռնարկութեանում, սովորութեանում, կոլեկտիվում: Ընկ. Կազանովիչը կուսակցական աշխատանքի յերեք հերթական ողակներին մասին տվյալ ետապում:

Կուսակցութեանը և առաջնորդները: Կենտկոմը կուսակցութեան կոլեկտիվ առաջնորդն է, նրա թեորեորական շտաբը: Առաջնորդներին դերը կուսակցութեան մեջ: Լենինը վորպես կուսակցութեան և Կոմունիստական Ինտերնացիոնալի տեսաբան, կազմակերպիչ և առաջնորդ, պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի և սոցիալիստական շինարարութեան կազմակերպիչ: Ընկ. Ստալինին դերը վորպես կուսակցութեան և Կոմինտերնի տեսաբանի ու առաջնորդի: Ընկ. Ստալինին դերը լենինիզմի հետագա զարգացման գործում: Ընկ. Ստալինը վորպես սոցիալիստական շինարարութեան հաղթանակների կազմակերպիչ և վողջ ֆրոնտով ծավալված սոցիալիստական հարձակման ղեկավար: Ընկ. Ստալինին դերը տրոցկիզմի, լաշ և «ձախ» ոպորտունիզմի ու ներանց նկատմամբ հաշտվողականութեան դեմ մղվող պայքարում Համկոմկուսում և Կոմինտերնում:

Թ Ե Մ Ա IV

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԻՆՉՊԻՍԻ ՓՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅ- ՔԱՐԵԼՈՎ ԱՃԵՑ, ԱՄՐԱՅԱՎ ՅԵՎ ԿՈՓՎԵՑ ԲՈԼՇԵՎԻԶՄԸ

Լենինը և Ստալինը Ռուսաստանում բուլշևիզմի ձևավորման առանձնահատկութեանների մասին: Այն պատմական պայմանները, վորոնց մեջ ծագեց և ձևակերպվեց բուլշևիզմը, Ռուսաստանը իմպերիալիզմի հակասութեանների հանգուցակեան է, համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնը, բուլշևիզմի ոջախը: Բուլշևիզմի միջազգային նշանակութեանը: Բուլշևիզմը բոլոր յերկրների բանվորների հեղափոխական պայքարի փորձի ընդհանրացումն է» (Ստալին) և «տակտիկայի տիպար բոլորի համար» (Լենին):

Բուլշևիզմը, վորպես նոր տիպի կուսակցութեան, ծագեց հեղափոխական մարքսիզմի գրանիտե հիմքի վրա, բանվորական շարժման ներսում յեղած ոպորտունիզմի դեմ պայքարելով Ռուսաստանում և միջազգային արեւնայում: Լենինի պայքարը պրոլետարիատի հեղեմոնիայի համար հեղափոխական շարժման մեջ, հեղափոխական թեորիայի համար, գիտակցականութեան դերի համար բանվորական շարժման մեջ, ընդդեմ տարերայնութեան

պոչական թեորիայի: «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միութեանը» վորպես պրոլետարիատի կուսակցութեան սաղմ: ՌՄԴԲԿ առաջին համագումարը: «Իսկրա»-յի կազմակերպումը և նրա դերը բուլշևիզմի գաղափարական ու կազմակերպական ձևակերպման գործում: Լենինի դերը «Իսկրա»-յի ստեղծման գործում: ՌՄԴԲԿ II համագումարը և նրա նշանակութեանը կուսակցութեան պատմութեան մեջ: Հիմնական տարածայնութեանները համագումարում (կուսակցութեան ծրագրի և կանոնադրութեան մասին, լիբերալ բուրժուազիայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին): Պառակտումը II համագումարում վորպես յերկու ինքնուրույն կուսակցութեանների—պրոլետարական՝ հետեղական-հեղափոխական, բուլշևիզմի կուսակցութեան և մանրբուրժուական՝ ոպորտունիստական, մենշևիկյան կուսակցութեան ձևակերպում:

1905—1907 թ. թ. հեղափոխութեան յուրահատկութեանը դարաշրջանի (իմպերիալիզմի) առանձնահատկութեանների տեսակետից: Հեղափոխութեան բնույթը (բուրժուա-դեմոկրատական), նրա շարժիչ ուժերը (պրոլետարիատը՝ հեղափոխութեան հեղեմոն, գյուղացիութեանը՝ դաշնակից) և պայքարի պրոլետարական մեթոդները (գործադուլ, զինված ապստամբութեան): 1905—1907 թ. թ. հեղափոխութեանը 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխութեան գլխավոր փորձն էր:

Կուսակցութեան տակտիկան և նրա վերաբերմունքը խորհուրդների, գյուղացիական շարժման, բանակային ապստամբութեանների, պրոֆսիոլութեանների հանդեպ: Տակտիկան բուրժուազիայի հանդեպ: Մենշևիզմը և տրոցկիզմը բուրժուազիայի գործակալներն էյին բանվորական շարժման մեջ: 1905—1907 թ. թ. հեղափոխութեան մեջ զինված ապստամբութեան նախապատրաստումն ու ղեկավարութեանը կուսակցութեան կողմից: Կուսակցութեան ազդեմամբ տակտիկան աշխատանքը: Բուլշևիզմը ժամանակավոր հեղափոխական կառավարութեան և խորհուրդների մասին: Խորհուրդները վորպես ապստամբութեան որդաններ, վորպես իշխանութեան սաղմնային որդաններ: Ծնված ազգութեանների հեղափոխական պայքարի ղեկավարութեանը պրոլետարիատի կողմից: Բուլշևիզմի տակտիկան վորպես այն ուղին, վոր ազանդում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան ներառումը սոցիալիստական հեղափոխութեան մեջ:

Լենինը բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության մեջ ներառելու մասին: «Դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն եւթ կսկսենք անցնել, և հենց մեր ուժերի համեմատ—կազմակերպված և զիտակից պրոլետարիատի ուժի համեմատ—կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխությանը»: «Մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության, մենք կանգ չենք առնի կես ճանապարհին» (Լենին): Ներածման հարցում տրոցկիստական մաքսանենդության մերկացումն ընկ. Ստալինի կողմից: Պայքարը պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական զիկտատուրայի համար, վորպես բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության մեջ ներառելու հիմնական պայմանի: Լենինի պայքարը մենշևիկների դեմ հեղափոխության բընույթի և շարժիչ ուժերի հարցերի շուրջը: Պայքարը պերմանենտ հեղափոխության տրոցկիստական թեորիայի դեմ, իբրև հեղափոխական ֆրազայով վարագուրված մենշևիզմի մի ալյաձևության:

Յերբորդ համագումարը և նրա դերը կուսակցության պատմության մեջ: Յերբորդ համագումարի վորոշումները—ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին, ղինված ապրտամբության մասին, ագրարային հարցի մասին:

1905—1907 թ. թ. հեղափոխության միջազգային ազդեցությունը (Յեվրոպայում և Արևելքում. Չինաստան, Պարսկաստան, Թյուրքիա):

Բոլշևիկյան տակտիկան ռեակցիայի տարիներին. պայքար բանվոր դասակարգի հեղեմոնիայի պահպանման և ամրացման մասսաների ղեկավարման և նոր հեղափոխական վերելքի նախապատրաստան համար: Աշխատանքի լեզալ և անլեզալ մեթոդների զուգորդումը: Կուսակցության մաքրումն ոպրտունիստական ելեմենտներից: Լենինի (բոլշևիկների) պայքարը լիկվիդատորների, տրոցկիստների և ոտզովիստների դեմ: Մասսայական բանվորական շարժման վերելքը (Լենայի դեպքերը և գործադուլային պայքարի աճումը):

Պրագայի կոնֆերենցիան և նրա նշանակությունը կուսակցության պատմության մեջ: Տրոցկիստական-լիկվիդատորական ոգոստոսյան բլոկը վորպես ցենտրիզմի ոջախ Ռուսաստանում, ստեղծված՝ բոլշևիզմի դեմ պայքարելու համար:

Բոլշևիկյան լեզալ մամուլը («Զվեզդա» և «Պրավդա») վորպես բանվորական մասսաների կազմակերպիչ և կուսակցական կադրերի պատրաստման գպրոց:

1914—1918 թ. թ. պատերազմի լենինյան գնահատումը վորպես իմպերիալիստական պատերազմի: Պայքար իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու համար: Իր կառավարության պարտության լոզունգը: Բոլշևիկների պայքարը սոցիալ-շովինիզմի (Շեյդեման, Պլեխանով և այլն), ցենտրիզմի և պացիֆիզմի դեմ (Կաուցկի, Տրոցկի և այլն): Ցենտրիզմը վորպես պրոլետարիատի ամենավտանգավոր, «ամենաստոր» թշնամին:

Բոլշևիկների պայքարը Ռոզա Լյուքսեմբուրգի հայացքների դեմ ազգային-դադութային հարցում, իբրև պայքար իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության հակալենինյան թեորիայի դեմ:

Պայքար ընդդեմ «ձախ» բոլշևիկների, վորոնք ժխտում եյին իր կառավարության պարտության լոզունգը, ժխտում եյին ազգային-ազատագրական շարժման դերը պրոլետարական հեղափոխության մեջ իմպերիալիզմի դարաշրջանում:

Միջազգային հեղափոխական շարժման բոլոր ինտերնացիոնալիստական ելեմենտների համախմբումը բոլշևիկների շուրջը: Բոլշևիզմի ղեկավար դերը III Ինտերնացիոնալ ստեղծելու համար մզվող պայքարում, իբրև պայքար նոր տիպի համաշխարհային կուսակցության համար: Բոլշևիզմը վորպես Կոմինտերնի միակ դադափարական պատվանդանը և կազմակերպիչը:

Թ Ե Մ Ա Ն

ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԵԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՍԱՐ ՄՂԱՍ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Փետրվարյան հեղափոխության և նրանում պրոլետարիատի խնդիրների լենինյան գնահատումը: Բոլշևիկյան կուսակցության ղեկավար դերը փետրվարյան հեղափոխության մեջ: Կամենևի, Ռիկովի և մյուսների խմբի կողմից հեղափոխության բնույթի և հեռանկարների աջ ոպրտունիստական գնահատման դեմ մզվող պայքարը: Բոլշևիկյան կուսակցության ղերի մասին տրոցկիստական ստի մերկացումը մինչև Լենինի գալը:

Լենինի ապրիլյան թեզիսները: «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգը: Պայքար մենշևիկների և եսերների կղղիացման, խորհուրդների նվաճման, մասսաներին բոլշևիկների լոզունգների շուրջը համախմբելու համար: Գյուղացիության աշխատավոր մասսաների հեղափոխականացումը և պայքար իշխա-

նությունը պրոլետարիատի ու չքավոր գյուղացիութեան ձեռքն անցկացնելու համար: Վոչ մի ոժանդակութիւն ժամանակավոր կառավարութեանը: Խորհուրդները հեղափոխական կառավարութեան միակ հնարավոր ձևն են: Վերաբերմունքը գյուղացիական շարժման հանդեպ: Բոլշևիկները տակտիկան բանախում: Ծնշված ազգութիւնների շարժման ղեկավարութիւնը: 1917 թ. հուլիսյան որերը և իշխանութեան անցումը հակահեղափոխութեան ձեռքը: Կուսակցութիւնն անցնում և կիսալեզալ դրութեան: Կուսակցութեան VI համագումարը: Զինված ապստամբութեան նախապատրաստումը: Լենինը և Ստալինը վորպես զինված ապստամբութեան կազմակերպիչներն ու ղեկավարները Հոկտեմբերին: Կուսակցութեան պայքարը աջ ուղորտունիստների (Կամենևի, Զինովյեվ և այլն) շտրեյկերներութեան դեմ իշխանութեան գրավման շրջանում:

Հոկտեմբերյան հեղափոխութեան բնույթի և շարժիչ ուժերի լենինյան գնահատումը—Հոկտեմբերյան հեղափոխութիւնը սոցիալիստական հեղափոխութիւնն էր, վոր տապալեց բուրժուազիայի իշխանութիւնը և հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա իր ճանապարհին ավարտելով բուրժուազեմոկրատական հեղափոխութեան խնդիրները: Հոկտեմբերի հաղթանակը իմպերիալիզմի շղթայի խզումն և ամենանեղ ողակից: Լենինը և Ստալինը Հոկտեմբերի հաղթանակի առանձնահատկութիւնների և պայմանների մասին:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը համաշխարհային հեղափոխութեան սկիզբն և ու պատվանդանը: Պրոլետարական ապստամբութեան և պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի բոլշևիկյան հաղթական ղեկավարման տիպար հանդիսացող Հոկտեմբերի համաշխարհային պատմական նշանակութիւնը: Հոկտեմբերյան հեղափոխութեան ազդեցութիւնը կոմունիստական ելեմենտների ուժեղացման վրա Արևմուտքի և Արևելքի յերկրներում:

Համկոմկուսի և Կոմինտերնի ծրագիրը Հոկտեմբերյան հեղափոխութեան նշանակութեան մասին:

Պրոլետարիատը և չքավոր գյուղացիութիւնը Հոկտեմբերի շարժիչ ուժերն են: Պրոլետարիատի դաշինքը չքավոր գյուղացիութեան հետ, միջակի, չհոգաքամամբ, ընդդեմ վոլջ բուրժուազիայի—լոգունգի իրագործումը: Բուրժուազիայի պետական ճնշող ապարատի խորտակումը և սեփական պետական ապարատի ստեղծ-

ծումը պրոլետարիատի միջոցով: «Խորհուրդները նոր պետական ապարատ են» (Լենին):

Հոկտեմբերի առաջին դեկրետները վորպես սոցիալիստական շինարարութեան առաջին քայլեր: Դեկրետ հողի մասին, խաղաղութեան մասին, բանվորական կոնտրոլի մասին: Հողի սոցիալականացման դեկրետը վորպես գյուղացիութեան հիմնական մասսաների հետ համաձայնվելու պլատֆորմ: Բանկերի և գործարանների ազգայնացումը:

Լենինի (բոլշևիկներին) պայքարը խաղաղութեան համար, հանգստանալու համար: Բրեստի դաշնագիրը վորպես հարկադրյալ համաձայնութիւն իմպերիալիստների հետ՝ սոցիալիստական շինարարութեան համար խաղաղ ժամանակամիջոց ձեռք բերելու նպատակով: Կուսակցութիւնը Տրոցկու և «ձախ» կոմունիստների դեմ մղվող պայքարում խաղաղութեան հարցի շուրջը: Չքավորական կոմիտեները և նրանց նշանակութիւնը պրոլետարական հեղափոխութեան զարգացման գործում: Ազգային հարցի լուծումը—ազգերի ինքնորոշման իրավունքի լոգունգի իրագործումը:

Բուրժուազիայի, մենշևիկների և եսերների հակահեղափոխական ապստամբութիւնները: Կապիտալիստական պետութիւնների ինտերվենցիան Խորհրդային Ռուսաստանի դեմ: Պրոլետարական պետութեան պաշտպանութեան կազմակերպումը: Կարմիր գվարդիայից կանոնավոր Կարմիր բանակի անցնելը: Կուսակցութիւնը Կարմիր բանակի կազմակերպիչ և ղեկավար: Լենինի և Ստալինի ղեկավար դերը Կարմիր բանակի կազմակերպման գործում, քաղաքացիական պատերազմում և խորհրդային իշխանութեան հաղթանակի կազմակերպման գործում:

Ռազմական կոմունիզմի լենինյան գնահատականը: Պրոլետարիատի և գյուղացիութեան ռազմա-քաղաքական դաշինքը: Կուսակցութեան VIII համագումարը միջակի չհոգաքանելուց նրա հետ դաշինք կապելուն անցնելու մասին: «Կարողանալ համաձայնութեան գալ միջակ գյուղացիութեան հետ, վոչ մի պահ չհրաժարվելով պայքարելու կուլակի դեմ, ամուր հենվելով միայն չքավորութեան վրա» (Լենին) լենինյան լոգունգը:

VIII համագումարում ընդունված ծրագրի մշակումը և կուսակցութեան պայքարը Բուխարինի սխալների դեմ:



Թ Ե Մ Ա VI

ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Քաղաքացիական պատերազմի վերջանալը և անցումը ՆեՊ-ին, Լենինը և Ստալինը ՆեՊ-ի մասին: ՆեՊ-ը վերադառնալով սոցիալիզմի անցման շրջանում: «ՆեՊ-ը պրոլետարական պետություն հաստիքի վրա քաղաքականությունն է, վոր նպատակ ունի կապիտալիզմ թույլ տալ՝ հրամանատարական բարձունքները պահելով պրոլետարական պետության ձեռքում, վոր նպատակ ունի պայքարի հանել կապիտալիստական և սոցիալիստական ելեմենտները, վոր նպատակ ունի ուժեղացնել սոցիալիստական ելեմենտների դերն ի փնաս կապիտալիստական ելեմենտների, վոր նպատակ ունի սոցիալիստական ելեմենտների հաղթանակը ձեռք բերել կապիտալիստական ելեմենտների հանդեպ, վոր նպատակ ունի վոչնչացնել դասակարգերը, սոցիալիստական եկոնոմիկայի հիմք կառուցել» (Ստալին):

Պրոֆմիութենական դիսկուսիան: Կուսակցության պայքարը տրոցկիստական և անարխո-սինդիկալիստական թեքումների դեմ կուսակցության ներսում: Տրոցկու պատժումը վորպես ռազմա-կոմունիստական քաղաքականության շարունակությունը նոր պայմաններում, — քաղաքականություն, վորը տանում էր դեպի պրոլետարիատի և գյուղացիության հիմնական մասսաների դաշինքի խզումը: Բուխարինի բուֆեր դիրքը և նրա թափալումը դեպի տրոցկիզմը:

Հարձակում ՆեՊ-ի հիման վրա: Կուսակցության XI համագումարը ՆեՊ-ի մասին: Լենինը սոցիալիստական շինարարության հեռանկարների և ծանր արդյունաբերության դերի մասին: Ելեկտրիֆիկացիայի լենինյան պլանը և նրա դերը սոցիալիստական շինարարության մեջ: Լենինի կոոպերատիվ պլանը վորպես մանր-գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղի: Լենինը պետապարատի վերակառուցման և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու մասին: Լենինը կուլտուրական հեղափոխության պրոբլեմի մասին սոցիալիստական շինարարության ընդհանուր պլանում: Խնդրատրագման լենինյան ուսմունքի և լենինյան կոոպերատիվ պլանի գործնական ու տեսական գարգացումն ընկ: Ստալինի միջոցով: ՆեՊ-ի միջազգային նշանակությունը:

1923 թ. աշնան տնտեսական դժվարությունները և մանր-բուրժուական տատանումների ուժեղացումը կուսակցության մեջ: 1923 թ. դիսկուսիան: Տրոցկիստական ոպոզիցիայի տնտեսական պլատֆորմը — «գերինդուստրացման» քաղաքականությունը, գնների բարձրացման քաղաքականությունը, արտաքին առևտրի մենաշնորհների վերացումը, միջակի հետ դաշնակցելու տնտեսումը: Տրոցկու «գերինդուստրիալիստական» քաղաքականության կապիտուլյանտական եյությունը — սոցիալիստական շինարարության հաղթանակին հավատ չընծայելը և գյուղացիական տնտեսությունը վորպես գաղութ դիտելու հայացքը: Տրոցկիստական ոպոզիցիայի՝ ներկուսակցական հարցերում վերցրած պլատֆորմի մենշևիկյան եյությունը: պայքար ֆրակցիաների և խմբավորումների աղատություն համար, հին գվարդիայի վարկաբեկումը և սերունդների հակադրումը: Տրոցկիզմի ձգտումը — ներկուսակցական դեմոկրատիայի համար պայքարելու ձեռք տալ — փոխելու բոլշևիկյան դեկավարությունը՝ իր քաղաքական դիժն անցկացնելու համար: Լենինի մահը: Դիսկուսիա «Հոկտեմբերի դասեր»-ի մասին: Տրոցկիզմի ջախջախումը:

Լենինը մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության և խնդիրների մասին: Լենինյան ուսմունքի զարգացումն ընկ: Ստալինի կողմից: XIV կուսկոնֆերենցիան մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի մասին: Խնդրատրագումը սոցիալիզմի պատվանդանն է: Կուսակցության XIV համագումարն ինդուստրացման համագումարն էր: «Լենինգրադյան ոպոզիցիայի» առաջացումը: Կուսակցության պայքարը «նոր ոպոզիցիայի» դեմ՝ ԽՍՀ Միության մեջ սոցիալիզմ կառուցելու համար: Միացյալ բոկի կազմվելը՝ մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտման տրոցկիստական պլատֆորմի վրա: Միջակի հետ դաշնակցելու լենինյան քաղաքականության խեղաթյուրումը: Կուսակցությանը և խորհրդային պետությանը վերասերման մեջ մեղադրելը: Տրոցկիստական-գլխովյեվյան բոկի փորձը յերկրորդ կուսակցություն ստեղծելու: XV կուսկոնֆերենցիան և Կոմինտերնի Գործկոմի VII պլենումը ոպոզիցիոն բոկի մասին՝ իբրև Համկոմկուսի ներսում գոյացած սոցիալ-դեմոկրատական թեքման: Կուսակցության XV համագումարի վորոշումը տրոցկիզմի հայացքների և Համկոմկուսին պատկանելու անհամատեղելիության մասին, Տրոցկիզմի ջախջախումը և նրա վերածումը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի:

Սոցիալիստական շինարարութեան աշողութիւնը և յերկրի ինդուստրացման հիման վրա գյուղատնտեսութիւնը սոցիալիստական վերակառուցման յենթարկելու խնդիրները: Կուսակցութեան XV համագումարը կոլեկտիվացման համագումարն էր: Հընդամյա պլանը սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման պլանն է: Ժողովրդական տնտեսութեան զարգացման առաջին հընդամյա պլանի հաստատումը XVI կուսկոնֆերենցիայի կողմից: Սոցիալիստական շինարարութեան աշողութիւնները և դասակարգային պայքարի սրումը: Աջ թեքումը գլխավոր վտանգն է ներկա ետապում:

Դասակարգային պայքարի մարման և սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման աջ ոպորտունիստական տեսութիւնը: Լենինյան կոոպերատիվ պլանի խեղաթուրումն աջերի կողմից: Աջ ոպորտունիստների գաղափարական միացումը բուրժուական ռեստավրատորների ծրագրի հետ տնտեսական շինարարութեան հիմնական հարցերում: Աջ ոպորտունիստների ֆրակցիոն աշխատանքը: Կուսակցութեան XVI համագումարը աջ թեքման մասին իբրև կուսակցութեան ներսում կուլակային ագենտուրայի, աջ թեքման հայացքների և Համկոմիւտոնի պատկանելու անհամատեղելիութեան մասին: Կուսակցութեան պայքարը յերկու ֆրոնտի վրա—ընդդէմ աջ թեքման, իբրև գլխավոր վտանգի, ընդդէմ «ձախերի», ընդդէմ թեքումների նկատմամբ՝ հաշտվողականութեան:

Սոցիալիստական շինարարութեան տնտեսական և քաղաքական աշողութիւնները, վորոնք նախապատրաստեցին սոցիալիզմի շրջանը թեկոսելու: Մեծ բեկման տարին և «ով-ում» հարցի լուծումն արդշաւաբերութեան մեջ: Գյուղացիութեան չքավոր-միջակային մասսաների շրջադարձը դեպի սոցիալիզմ: Կուլակութեանը սահմանափակելու և վտարելու քաղաքականութիւնից նրան համատարած կոլեկտիվացման հիման վրա վորպես դասակարգ՝ վերացնելու քաղաքականութեան անցնելը: Կուսակցութեան պայքարն ինքնահոսի աջ ոպորտունիստական տեսութեան և «ձախ» խոտորումների դեմ կոլեկտիվային շինարարութեան ասպարիզում: XVI համագումարը սոցիալիզմի ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակման համագումարն էր: Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը և «ով-ում» հարցի լուծումը քաղաքում ու գյուղում: Դասակարգային պայքարի սրումը՝ պրոլետարիատի կողմից կապիտալիստական ելմենտների վրա ամբողջ ֆրոնտով հարձակման անցնելու կապակցութեամբ: Հակահեղափոխական

կազմակերպութիւնները ԽՍՀՄ-ի ներսում բուրժուա-կապիտալիստական ինտերվենցիայի գործակալներն էյին («Արդյունաբերական կուսակցութիւն», մենշեիկների միութենական բյուրո, կոնդրատյեվշինա): Կուսակցութեան պայքարը դասակարգային թընամու դեմ տեսական ֆրոնտի զանազան բնագավառներում: Յերկերեսանի աջ-«ձախ» բլոկը: Աջ-«ձախ» բլոկի ջախջախումը: Կուսակցութիւնը յերկրորդ հնգամյակի համար մղվող պայքարում: Մասսաներին ղեկավարելու հիմնական պայմանները—կարողանալ առանձնացնել հիմնական ողակն ընդհանուր շղթայում, տալ ճիշտ լոգունգ (մասսաների համար հասկանալի), մասսաներին համոզել այդ լոգունգի ճշտութեանը, մասսաներից յետ չմնալ և առաջ չվազել, պայքարել յերկու ֆրոնտով՝ ընդդէմ աջ թեքման, վոր մնում է գլխավոր վտանգը սովյալ ետապում, ընդդէմ «ձախ» թեքման, ընդդէմ նրանց նկատմամբ հաշտվողականութեան—վորպես անդասակարգ հասարակութեան կառուցման հիմնական պայման:

Թ Ե Մ Ա VII

ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՅՑԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՏԱԿՆ Ե

Լենինը ծանր արդյունաբերութեան և ելեկտրիֆիկացիայի մասին, իբրև սոցիալիզմի իրական և միակ նյութական հիմունքի: Կուսակցութեան ծրագրերը սոցիալիստական ինդուստրացման մասին: Սոցիալիստական ինդուստրացումն ապահովում է արդյունաբերութեան հանրայնացված սեկտորի հաղթանակը մասնավոր տնտեսական սեկտորի հանդեպ, ապահովում է «ով-ում» հարցի լուծումը սոցիալիզմի ոգտին, ապահովում է սոցիալիզմի հաղթանակը մեկ յերկրում:

Արտադրութեան միջոցների արտադրութիւնը ինդուստրացման հիմքն է: Սոցիալիստական ծանր արդյունաբերութիւնը գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման պատվանդանն է: Սոցիալիստական ինդուստրացումը առաջներում ճնշված ազգութիւններին տնտեսական և կուլտուրական յետամնացութեան վերացման հիմքն է, կապիտալիստական յերկրների հանդեպ մեր տնտեսական անկախութեան, յերկրի պաշտպանունակութեան ամրացման, միջազգային պրոլետարիատի դիրքի ամրացման հիմքն է:

Լենինը և Ստալինը կուսական աղբյուրների, սոցիալիստական ինդուստրիայի զարգացման տեմպերի և մեր տեխնիկական

տնտեսական յետաձուլութեան վերացման մասին: Առաջավոր յերկրներին հասնելու և տեխնիկական-տնտեսական տեսակետից նրանց անցնելու խնդիրը: «Առաջավոր յերկրներին մենք յետ ենք մնացել 50—100 տարով: Մենք պետք է այդ տարածութիւնը կտրենք անցնենք տասը տարում: Կամ մենք այդ կանենք, կամ մեզ կճգմեն» (Ստալին):

Հնգամյակը վորպես ԽՍՀՄ ինդուստրացման գործնական պլան:

Սոցիալիստական արդյունաբերութեան զարգացման բոլորէկյան տեմպերը:

Հնգամյակի հիմնական ձեռնարկութիւնների բնութագրութիւնն ու տնտեսական նշանակութիւնը. Ուրալ-կուզբասյան կոմբինատի ածխա-մետաղաձուլական նոր բաղադրի ստեղծումը:

Մետաղաձուլական նոր գիգանտ ձեռնարկութիւնների՝ Կուզնեցկի, Մագնիտոգորսկի, Կերչի, Դնեպրոպետրովսկի և այլ կոմբինատների գործարկումը:

Գյուղատնտեսական և ընդհանուր մեքենաշինարարութեան նոր գիգանտների ստեղծումը. Խարկովի, Ստալինգրադի, Չելյաբինսկի տրակտորի գործարանները, Գորկու (Նիժնի-Նովգորոդի) և Մոսկվայի ավտոմոբիլի գործարանները, Սարատովի կոմբինատը, Ռոստովի «Մեխմաշը», Գորկու և Մոսկվայի զազգյահաշինարարական գործարանները, Ուրալի և Կրամատորսկի ծանր մեքենաշինարարութեան գործարանները, Դնեպրոպետրովսկի կոմբինատը և այլն:

Քիմիական արդյունաբերութեան խոշորագույն համաշխարհային գիգանտների ստեղծումը—Բերեզնիկի, Բորբիկի, Վոսկրեսենսկու, Չերնոբեչենսկի և Դորոգոմիլովսկի քիմիական կոմբինատները:

Խոշորագույն ելեկտրակայանների ստեղծումը—Դնեպրոպետրովսկի, Շտերովի, Կաշերի, Իվանովովի, Գորկու Կիզելի, Ստալինգրադի և այլ ելեկտրակայանները:

Նոր ածխահանքերի, նավթահորերի, տորֆի մշակումների աճումը և արտադրութեան այդ ճյուղերի մեքենայացումը:

Նոր արտադրութիւնների տեխնիկայի տիրապետման և յուրացման աջողութիւնները (տրակտորներ, կոմբայներ, ավտոմոբիլներ, զազգյահաշինութիւն, վերակալոր պողպատներ և այլն): Արտադրողականութեան աճումը, շնորհիվ նոր տեխնիկա մտցնե-

լուն և աշխատանքի նոր ձևեր՝ սոցմըցում ու հարվածայնութիւն ծավալելուն:

Ժողովրդական տնտեսութեան ընդհանուր վերելքը և սոցիալիստական ինդուստրիայի առաջատար դերը ԽՍՀՄ վողջ ժողովրդական տնտեսութեան մեջ: Ագրարային յերկրից ԽՍՀՄ-ի վերածումն ինդուստրիալ յերկրի: Սոցիալիզմի շրջանը թեակոխելը և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը: «Ուլ-ում» հարցի լիակատար ու անվերադարձ լուծումը սոցիալիզմի ոգտին քաղաքում և գյուղում:

Բանվորական մասսաների նյութական և կուլտուրական մակարդակի աճումը: Բանվոր դասակարգի թվական աճումը: Ժողովրդական լիակատար վոչնչացումը: Աշխատավարձի աճումը: Բանվորների բնակարանային-կենցաղային պայմանների բարելավումը, Լաշն սպանման առարկաների արտադրութեան, խորհրդային առևտրի ու նրա կարևորագույն ողակի՝ քաղաքի և գյուղի աշխատավորութեանը լրացուցիչ մթերքներ տվող կոլտոզային առևտրի ծավալումը:

Այլ և «ձախ» ոպորտունիստների՝ ինդուստրացման տեմպի ուժից վեր լինելու մասին յեղած տեսութեան կրաւը:

Հնգամյակի վերջին տարվա խնդիրների կատարումը յերկրորդ հնգամյակի աջող կատարման հիմքի ստեղծումն է:

